



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 14 >> << *Արմավիր* >> 2020թ.

N *ՎՊ/115-2020*

Ք. Արմավիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՈՒՄ ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ
ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ (COVID-19) ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ԱՄԵՆՕՐՅԱ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐ
ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 14-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N298-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պարետի 2020 թվականի մարտի 31-ի N27 որոշումը և 2020 թվականի ապրիլի 11-ի N5/58-2020 ցուցումը, արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ողջ տարածքում անձանց ազատ տեղաշարժի իրավունքի նկատմամբ կիրառվող ժամանակավոր սահմանափակումների, տնտեսական գործունեության տեսակների նկատմամբ կիրառվող ժամանակավոր սահմանափակումների և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում գործող կազմակերպությունների կողմից պահպանման ենթակա, նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածումը կանխելուն ուղղված կանոնների պահպանման նկատմամբ ամենօրյա մշտադիտարկում սահամնելու նպատակով.

որոշում եմ՝


1. Ստեղծել աշխատանքային խմբեր՝ համաձայն NN1-3 հավելվածների:
2. Աշխատանքային խմբերի ղեկավարներին (Գ. Հովհաննիսյան, Ս. Թովմասյան և Հ. Հարությունյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել համագործակցելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային

վարչության և Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա տեսչական մարմինների տարածքային ստորաբաժանումների հետ: Անհրաժեշտության դեպքում, բացառապես կամավորության սկզբունքով, որ դա չխաթարի տվյալ մարմնի բնականոն գործունեությունը, աշխատանքային խմբի աշխատանքներին կարող են ներգրավվել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության Արմավիրի մարզային բաժնի հարկադիր կատարողները և դատական դեպարտամենտի դատական կարգադրիչները:

3. Աշխատանքային խմբերի ղեկավարներին (Գ. Հովհաննիսյան, Ս. Թովմասյան և Հ. Հարությունյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների մասին ամենօրյա պարբերականությամբ համապատասխան տեղեկատվություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի խորհրդականներ Վ. Դավթյանին, Ն. Պետրոսյանին և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Վ. Վարդազարյանին:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

 Invalid signature

 X *S. Matevosyan*
VERIFIED OCSP 4/14/2020 17:29:11 GMT+4
Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Կազմ

**արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված Հայաստանի
Հանրապետության Արմավիրի մարզի ողջ տարածքում անձանց ազատ տեղաշարժի
իրավունքի նկատմամբ կիրառվող ժամանակավոր սահմանափակումների ամենօրյա
մշտադիտարկում իրականացնող աշխատանքային խմբի**

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Արշակ Ղորղանյան՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի գլխավոր մասնագետ.

Անդամներ՝

Սրապիոն Մարտիրոսյան՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի ավագ մասնագետ.

Սողոմոն Սարգսյան՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության ավագ մասնագետ.

Գառնիկ Խաչատրյան՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժնի ավագ մասնագետ:

Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝

Վ. Վարդազարյան



Հավելված N2
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2020 թվականի ապրիլի/4-ի
ՄՄՈ/115-2020 որոշման

Կազմ

արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի ողջ տարածքում տնտեսական գործունեության տեսակների նկատմամբ կիրառվող ժամանակավոր սահմանափակումների ամենօրյա մշտադիտարկում իրականացնող աշխատանքային խմբի

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Սիմոն Թովմասյան՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր ճարտարագետ.

Անդամներ՝

Համլետ Կուրդինյան՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ.

Ռաֆիկ Սահակյան՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի քաղաքաշինության վարչության ավագ ճարտարագետ.

Մարտիրոս Սարիբեկյան՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ:

Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝

Վ. Վարդազարյան

14.04.2020



VERIFIED OCSP 14.04.2020 15:40:27 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217

Կազմ

**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզում գործող
կազմակերպությունների կողմից պահպանման ենթակա, նոր տեսակի
կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) փարածումը կանխելուն ուղղված
կանոնների պահպանման նկատմամբ ամենօրյա մշտադիտարկում
իրականացնող աշխատանքային խմբի**

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Հովհաննես Հարությունյան՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի
առողջապահության և սոցիալական ապահովության վարչության
պետ.

Անդամներ՝

Արուսյակ Բեգլարյան՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի
առողջապահության և սոցիալական ապահովության վարչության
գլխավոր մասնագետ.

Վարդան Ալեքսանյան՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի
առողջապահության և սոցիալական ապահովության վարչության
գլխավոր մասնագետ.

Յողիկ Սարգսյան՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի
առողջապահության և սոցիալական ապահովության վարչության
գլխավոր մասնագետ:

Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝

Վ. Վարդազարյան

